544 Խաչի ճամփան սկսվում է մսուրից,

1. Խաչի ճամփան սկսվում է մսուրից,
Գողգոթայի տառապանքով վերջանում,
Օրենքներն էլ սկսվում են Սինայից,
Գողգոթայի անարգ խաչով վերջանում:

Տերն օրհնի, խաչը ծանր չթվա
Ու մեր հոգին Իր արյունով լվանա:

2. Ոմանց համար խաչի ճամփան մսուր է,
Ոմանց համար այնտեղ գնալն իզուր է,
Ոմանց համար անհասնելի բարձունք է,
Ոմանց համար օրհնություն է, արցունք է:

3. Ով իր ճամփան սկսում է մսուրից,
Տառապանքն է լինում նրան ուղեկից,
Ինչպես եղավ մեր պաշտելի Հիսուսին՝
Տառապանքի խաչն էր կրում Իր ուսին:

4. Նույն այդ խաչից նվիրում է նաև մեզ,
Որ խոնարհվենք, դառնանք Գառնուկ՝ Իրեն պես,
Խաչված կյանքով փորձությանը դիմանանք,
Փորձության հետ օրհնություն կա, իմանանք: